



ՍՈՒՆ ՅԳԻ

ՊԱՏԵՐԱԳՄԻ

ԱՐԿԵՍՏՈ



孫子兵法

ՏՈՒՆ ԲՈՒՄ

Պատերազմի արվեստը

Սուլն Ցզի

Թարգմանիչ՝ Լիլիթ Մկրտչյան

Երևան, 2026 թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՀՏԴ 355(510)

ԳՄԴ 68.2(5Զ)

Ս 940

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (Էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9381-1-0 (Էլ. հրատ.)

ISBN 978-9939-9381-0-3 (տպագիր)

ISBN 978-9939-9381-0-3



孫子 兵法

Պատերազմի արվեստը

Սուն Ցզի

«Պատերազմի արվեստ»-ը ռազմավարական մտածողության և ռազմարվեստի դասական աշխատություն է, որն ավանդաբար վերագրվում է չինացի զորավար և փիլիսոփա Սուն Ցզիին (մոտ մ.թ.ա. VI-V դդ.):

Ստեղծագործությունը գրվել է Յին Չինաստանի «Պատերազմող թագավորությունների» ժամանակաշրջանում և համարվում է ռազմական տեսության ամենահին պահպանված աշխատություններից մեկը:

Գիրքը բաղկացած է տասներեք գլուխներից, որոնցում ներկայացվում են պատերազմ վարելու հիմնարար սկզբունքները՝ ռազմավարական մտածողությունը, հակառակորդի հոգեբանության և մարտավարության ուսումնասիրությունը, խոհեմ պլանավորումը, հետախուզության կիրառումը և ուժի արդյունավետ ու չափավոր օգտագործումը:

Աշխատությունը դարեր շարունակ մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն ռազմական գիտության զարգացման վրա, այլև կիրառվել է պետական կառավարման, քաղաքական ռազմավարության և մրցակցային մտածողության տարբեր ոլորտներում: «Պատերազմի արվեստ»-ը համաշխարհային մտքի պատմության կարևորագույն ռազմավարական տեքստերից է և պահպանել է իր արդիականությունը մինչև մեր օրերը:

Գիրքը նախատեսված է ռազմարվեստով, պատմությամբ, քաղաքական մտածողությամբ, կառավարման տեսությամբ և ռազմավարական ուսումնասիրություններով հետաքրքրվող ընթերցողների համար:

Թարգմանվել է ավանդական չինարեն բնագրից՝ մի շարք լեզուներով արված թարգմանությունների հետ համադրությամբ: Օգտագործվել են, մասնավորապես՝ անգլերեն՝ Lionel Giles, Samuel B. Griffith, Thomas Cleary; ռուսերեն՝ Николай Конрад, Владимир Малявин; ֆրանսերեն՝ Jean Lévi, Gérard Chaliand թարգմանությունները:

Խմբագրական նշում

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ info@novusliber.com հասցեով:

ՆԱԽԱԲԱՆ

Այս աշխատության թարգմանությունը համարձակ նախաձեռնություն է՝ պայմանավորված ինչպես տեքստի հնությանը, այնպես էլ լեզվական ու մեկնողական բարդությանը: Սույն տարբերակը ավելի քան երեսուն խմբագրումների արդյունք է և համադրվել է դասական չինարեն բնագրի հետ: Նախնական թարգմանության հիմքում օգտագործվել են Տորոնտոյի ՄըքՄասթեր համալսարանի պրոֆեսոր դոկտոր Մ. Վ. Լյուբ Չանի (1987թ.) և անգլիացի լեզվաբան-չինագետ Լայոնել Ջայլզի (1910թ.) թարգմանու-թյունները:

«Պատերազմի արվեստը» հնադարյան ամենահայտնի ռազմագիտական տեքստերից մեկն է, որը չունի մեկ միասնական և անփոփոխ բնագրային տարբերակ: Աշխատությունը ավանդաբար վերագրվում է Սուն Ցզիին (Սուն Վու), որի գործունեության մասին տեղեկություններ պահպանվել են չինական պատմագիտական աղբյուրներում, մասնավորապես մ.թ.ա. II դարում կազմված «Շի Ցզի» («Պատմիչի գրառումներ») տարեգրությունում:

Տեքստը բաղկացած է տասներեք գլուխներից և գրված է դասական չինարենով՝ հակիրճ, խտացված և բազմիմաստ լեզվով: Նույն արտահայտությունը տարբեր մեկնաբանու-թյուններում կարող է ստանալ իմաստային տարբեր երանգներ, ինչը հաճախ հանգեցնում է տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների միջև էական տարբերությունների:

«Պատերազմի արվեստի» որևէ ամբողջական բնագիր չի պահպանվել մինչև մեր օրերը: Ժամանակակից գիտական

հրատարակությունները հիմնականում հենվում են դարերի ընթացքում փոխանցված ավանդական տեքստի վրա, որը ձևավորվել է հատկապես Սուն դինաստիայի ժամանակա-շրջանի տեքստային ավանդույթում: Տեքստի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է նաև Յինբյուեշան Յան դամբարանում 1972 թվականին հայտնաբերված բամբուկե սալիկների տարբերակը (Chinese Text Project):

Ժամանակակից հրատարակությունները սովորաբար հաշվի են առնում ինչպես ավանդական փոխանցված տարբերակը, այնպես էլ բամբուկե սալիկների գրությունների ընթերցումները:

Եվրոպայում «Պատերազմի արվեստի» առաջին հայտնի թարգմանություններից մեկը կատարվել է 1772 թվականին ֆրանսիացի միսիոներ Ժոզեֆ Ամյոյի կողմից: Առաջին անգլերեն թարգմանությունը հրատարակվել է 1905 թվականին Էվերարդ Բալթրոփի կողմից, իսկ հետագայում առավել լայն կիրառություն են ստացել Լայոնել Ջայլզի և Սամյուել Գրիֆիթի թարգմանությունները: Դրանից հետո աշխատությունը բազմիցս թարգմանվել է տարբեր լեզուներով:

Սույն հայերեն հրատարակության թարգմանությունը կատարվել է դասական չինական տեքստային ավանդույթի հիման վրա՝ համադրելով տարբեր լեզուներով առկա մի շարք թարգմանություններ և մեկնաբանություններ:

Թարգմանության ընթացքում պահպանվել է բնագրի կառուցվածքն ու մտքի խտությունը՝ հնարավորինս ապահովելով տերմինաբանական և իմաստային համապատասխանությունը հայերենում:

Թարգմանության նպատակն է գիրքը հայերեն ընթերցողին

ներկայացնել որպես գրական ամբողջական գործ, ուստի բաց են թողնվել լեզվաբանական մանր մեկնաբանությունները, որոնք տվյալ հրատարակության շրջանակում էական չեն: Թարգմանության ընթացքում օգտագործվել են նաև պրոֆեսոր Մ. Վ. Լյուբ Չանի և Նանբայի համալսարանի պրոֆեսոր Չեն Բինգֆուի համատեղ վերլուծական աշխատանքը («Sunzi on the Art of War and its General Application to Business»), ինչպես նաև Ռալֆ Դ. Սոյերի «Ջնադարյան Չինաստանի յոթ ռազմագիտական կանոնները» աշխատությունը:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹՅՈՒՆ

I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ	2
II. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ	7
III. ՀԱՐՁԱԿՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	11
IV. ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ	16
V. ԲԱՆԱԿԻ ԵՌԱՆԴԸ	20
VI. ԹՈՒՅԼ ԵՎ ՈՒԺԵՂ ԿԱՄ ԴԱՏԱՐԿ ԵՎ ԼԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	25
VII. ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՍԱՎԱՐՈՒՄԸ	32
VIII. ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԸ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ	39
IX. ԶՈՐԱՐՇԱԿԸ	43
X. ՏԵՂԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	51
XI. ԻՆԸ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ	58
XII. ԿՐԱԿՈՎ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ	63
XIII. ԼՐՏԵՍՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԽՈՒՅՋՆԵՐԸ	67

I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Սույն Ցզին ասում է.

Պատերազմի արվեստը պետության կարևորագույն գործն է: Այն կենաց ու մահու հարց է լուծում, կարող է տանել կամ դեպի փրկություն, կամ դեպի կործանում, ուստի լուրջ ուսումնասիրություն է պահանջում, որի անտեսումը նույնպես կործանարար կլինի:

Պատերազմի արվեստը կառավարվում է հինգ գործոններով: Ուստի պատերազմի արդյունքը կանխատեսելու համար պետք է վերլուծել իրավիճակը՝ այս հինգ գործոններով.

- Բարոյական միասնություն
- Երկինք
- Երկիր
- Չորապետ
- Կարգապահություն:

Բարոյական միասնությունը ժողովրդի և իշխանավորի միաբանությունն է, որի շնորհիվ մարդիկ մարտի դաշտում առանց առարկության և անձնագոհաբար հնազանդվում են իշխանին:

Երկինքը խորհրդանշում է գիշերն ու ցերեկը, ցուրտն ու շոգը, ժամանակի և տարվա չորս եղանակների փոփոխությունները:

Երկիրը խորհրդանշում է ճակատամարտի դաշտի տարածաչափերը, հարձակման և նահանջի ուղիները, բաց դաշտում կռվելու և նեղ կաճաններով տեղաշարժվելու վտանգներն ու առավելությունները:

Չորապետը խորհրդանշում է իմաստությունը, ռազմագիտական մտքի խորությունը, կառավարման հմտությունը, արդար պատիժն ու պարգևատրումը, զինվորների նկատմամբ մեծահոգությունն ու խստությունը, նրանց խիզախությունն ու վճռականությունը:

Կարգապահությունը վերաբերում է գորաշարժի կազմակերպմանը, հրամանատարների ղեկավարական հմտությանը և պատասխանատվությանը, ինչպես նաև զինամթերքի ու պաշարների պահպանմանն ու բաշխմանը:

Այս հինգ գործոնները պետք է քաջ հայտնի լինեն յուրաքանչյուր զորավարի: Մարտում կհաղթի նա, ով շարժվում է դրանցով: Իսկ նա, ով անտեսում է դրանք, միշտ կպարտվի:

Ուստի պատերազմի արդյունքը կանխատեսելու համար պետք է համեմատել երկու կողմերի պայմանները, հետևյալ յոթ չափանիշներով.

- Ո՞ր կողմի իշխանը և ժողովրդն են ավելի միասնական:

- Ո՞ր գորավարն է ավելի հմուտ:
- Ո՞ր կողմն է ավելի բարենպաստ պայմաններում՝ Երկնքի և Երկրի տեսակետից:
- Ո՞ր կողմն է ավելի խիստ պահպանում կարգապահությունը:
- Ո՞ր բանակն է ավելի ուժեղ:
- Ո՞ր կողմի զինվորներն ու սպաներն են ավելի լավ պատրաստված:
- Ո՞ր բանակում են ավելի հետևողականորեն կիրառում պատիժն ու պարզևատրումը:

Այս համեմատությունների միջոցով կարելի է կանխատեսել պատերազմի ելքը՝ հաղթանակ, թե պարտություն:

Այն գորավարը, որը կլսի իմ խորհուրդները ու կգործի այս սկզբունքներով, կհաղթի մարտերում: Նա պետք է գլխավորի բանակը: Իսկ նա, ով կանտեսի դրանք, դատապարտված է պարտության, և պետք է հեռու մնա բանակից:

Սակայն, նույնիսկ իմ խորհուրդներին հետևելով, գորավարը պետք է մարտի ընթացքում գործի ըստ ծագող հանգամանքների և անհրաժեշտության դեպքում դուրս գա ընդունված կանոնների սահմաններից:

Չորապետի հմտությունը չափվում է՝ իր ծրագրերը իրավիճակի փոփոխությանը համապատասխան փոխելու և ցանկացած անակնկալի դեպքում սթափ գործելու կարողությամբ:

Պատերազմի արվեստը հիմնված է խաբելու կարողության վրա:

Ուստի՝

Երբ կարող ենք հարձակվել, պետք է տկար ձևանանք:

Երբ դասավորում ենք մեր ուժերը, հակառակորդին պետք է թվա, թե ոչինչ չենք անում:

Երբ մոտ ենք, պետք է համոզենք, թե դեռ հեռու ենք:

Երբ հեռու ենք, պետք է թվա, թե արդեն մոտ ենք:

Միշտ խայծ ունեցիր թշնամուն փոքր առավելությամբ գայթակղելու համար:

Ձևացրո՛ւ թե խուճապի մեջ ես, և հարվածի՛ր, երբ նա համոզված է, թե գլուխդ կորցրել ես:

Խուսափի՛ր քեզ գերազանցող ուժեղ թշնամու հետ անմիջական բախումից:

Կատաղեցրո՛ւ տաքարյուն թշնամուն:

Գրգռի՛ր գոռոզ ու ինքնավստահ հակառակորդին, որպեսզի ավելի ամբարտավան դառնա:

Յոգնեցրո՛ւ նրան, եթե հասցրել է հանգստանալ:

Անհաշտություն մտցրո՛ւ նրա շարքերում, եթե միասնություն է վայելում:

Չարձակվի՛ր այնտեղ և այն ժամանակ, երբ թշնամին չի սպասում:

Մրանք են այն պայմանները, որոնք տանում են դեպի հաղթանակ, սակայն անհնար է կանխավ որոշել բոլոր մանրամասները:

Այն գորավարը, որը մարտից առաջ մանրակրկիտ հաշվարկ է կատարել, կհաղթի: Այն գորավարը, որը քիչ է խորհել, պարտություն կկրի:

Մեծ հաշվարկները տանում են դեպի հաղթանակ, հաշվարկների պակասը՝ դեպի պարտություն:

Առանց ծրագրի պատերազմի մեջ մտնողը կկործանվի:

Կողմերի հաշվարկները վերլուծելով՝ կարելի է հասկանալ, թե նրանցից ով կհաղթի, և ով՝ կպարտվի:

II. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՎԱՊԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Ցզին ասում է.

Պատերազմական գործողությունների ժամանակ, երբ դաշտ ես հանում հազարավոր մարտակառքեր, զինամթերքով և պաշարներով բեռնված բեռնակառքեր և զենք ու զրահով ծանրացած հարյուր հազարավոր զինվորներ, այնքան սնունդ ու պաշար պետք է վերցնես, որ նրանք կարողանան հազարավոր լի¹ ճանապարհ անցնել:

Թիկունքում և ճակատում սպասվող ծախսերը, հնարավոր հյուրերին ընդունելու, նույնիսկ ստանձի ու թանաքի նման մանր պարագաների համար կատարվող ծախսերը, օրական կհասնեն հազար արծաթի: Դա է հարյուր հազար զինվոր պահելու գինը:

Նման բանակով դաշտ դուրս գալով՝ զորապետը պետք է ձգտի հնարավորինս արագ հասնել հաղթանակի: Եթե պատերազմը ձգձգվի, զենքերը կբթանան, իսկ նրանց ոգին կընկճվի:

Եթե զորապետը ժամանակ վատնի քաղաք պաշարելու համար, բանակը կջլատվի և ուժասպառ կլինի:

¹ Լի (里) — հին չինական հեռավորության չափման միավոր է: Տարբեր ժամանակաշրջաններում դրա երկարությունը փոփոխվել է, սակայն դասական ռազմական տեքստերի ուսումնասիրության մեջ սովորաբար ընդունված է, որ 1 լի ≈ 400–500 մետր:

Եթե պատերազմական արշավանքը երկար տևի, պետության պաշարները կսպառվեն և կփոշիանան:

Երբ բանակի զենքերը բթացած են, ոգին՝ ընկճված, ուժերը՝ սպառված, իսկ գանձերը՝ ծախսված, հարևան իշխանները կձգտեն օգտվել երկրի ծանր վիճակից և կհարձակվեն նրա վրա: Այդ դեպքում նույնիսկ ամենախիմաստուն զորավարը չի կարողանա կանխել երկրի կործանումը:

Թեև պատմությանը հայտնի են դեպքեր, երբ զորավարները պարտվել են՝ շտապելով արագ հաղթանակի հասնել, երբեք չի եղել հաղթանակ երկարատև ու ջլատող պատերազմի արսյունքում:

Տևական պատերազմը իմաստնության նշան չէ: Ոչ մի երկիր չի շահել երկար պատերազմից:

Միայն այն զորավարն է հասկանում պատերազմն արագ ավարտելու անհրաժեշտությունը, ով ծանոթ է պատերազմի չարիքներին: Նա, ով չի հասկանում երկար պատերազմի կործանարար բնույթը, չի կարող հասկանալ նաև արագ հաղթանակի արժեքը:

Չմոտ զորավարը նույն գինվորին երկրորդ անգամ չի գինակոչի և նույն բեռնակառքը երկու անգամ չի բեռնի:

Չենքն ու զինամթերքը բեր բեզ հետ, բայց սննդի պաշարները վերցրու թշնամու երկրից: Այդպես բանակը միշտ կունենա բավարար սնունդ:

Պատերազմող երկրի աղքատացման գլխավոր պատճառներից մեկն այն է, որ երկիրը ստիպված է պաշարներ մատակարարել հեռավոր բանակին: Փոխադրումը լրացուցիչ ծանր բեռ է երկրի վրա, իսկ հեռու գտնվող բանակ պահելը աղքատացնում է բնակչությանը:

Չինվորական ճամբարների մոտ ապրանքների գները բարձրանում են: Գների աճը սպառում է մարդկանց ունեցվածքը, իսկ բանակի պահպանման համար գանձվող հարկերը գյուղացիներին հասցնում են աղքատության:

Երկար պատերազմի արդյունքում երկրի դրամական միջոցները սպառվում են, իսկ հայրենիքում տները դատարկվում են:

Ժողովրդի ունեցվածքի զգալի մասը կկորչի, իսկ պետության եկամուտների մեծ մասը կծախսվի վնասված մարտակառքերը վերանորոգելու, հիվանդ ձիերին փոխարինելու, մաշված զենք ու զրահը վերականգնելու և բեռնակիր կենդանիներին համալրելու վրա:

Ուստի իմաստուն գորավարը իր բանակի պաշարները կհամալրի թշնամու երկրից: Թշնամու երկրից վերցված մեկ բեռնակառք ցորենը հավասարազոր է սեփական երկրից բերված քսան բեռնակառքի, իսկ մեկ կապ խոտը՝ քսան կապի:

Որպեսզի գորքը անխնա կռվի, պետք է զինվորների մեջ թշնամու նկատմամբ ատելություն սերմանել: Թշնամու հարստությանը տիրանալու համար պետք է խրախուսել զինվորներին ռազմական ավարով:

Մարտակառքերով ճակատամարտում, երբ թշնամուց զավթվում են մարտակառքեր, պետք է անմիջապես փոխել դրանց դրոշները և օգտագործել դրանք սեփական բանակի կազմում՝ պարզևատրելով նրանց, ովքեր առաջինն են գրավել դրանք:

Գերի վերցված զինվորների հետ պետք է մարդասիրաբար վարվել և օգտագործել նրանց ծառայությունները: Դա նշանակում է ուժեղացնել սեփական բանակը պարտված թշնամու հաշվին:

Ուստի պատերազմի գլխավոր նպատակը պետք է լինի արագ հաղթանակը, և ոչ՝ երկարատև արշավանքը:

Պատերազմի արվեստում հմուտ զորավարը իր ժողովրդի ճակատագրի դատավորն է. նրանից է կախված՝ ժողովուրդը խաղաղություն կվայելի, թե կտառապի պատերազմի արհավիրքներից:

III. ՀԱՐՁԱԿՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Ցգին ասում է.

Պատերազմում լավագույն ռազմավարությունը՝ թշնամու դիմադրությունը առանց կռվի կոտրելն է:

Պատերազմի արվեստի լավագույն օրինակը՝ թշնամու երկիրն ամբողջությամբ և անվնաս վերցնելն է: Այնքան էլ մեծ հերոսությունն չէ որևէ երկիր երկարատև, կործանարար պատերազմից հետո գրավելը: Գիշտ ինչպես ավելի լավ է գերել թշնամու բանակը, քան մարտի մեջ կոտորել նրա բոլոր զինվորներին:

Ուստի բոլոր մարտերում կռվելն ու հաղթելը գերագույն կատարելությունն չէ: Գերագույն կատարելությունն է թշնամու դիմադրությունը առանց ճակատամարտի հաղթահարելը:

Ռազմագիտական գերագույն հմտությունն է թշնամու պլանները խափանելը: Հաջորդ լավագույն մարտավարությունն է՝ թույլ չտալ, որ թշնամու ուժերը միավորվեն: Միայն դրանից հետո է գալիս թշնամու վրա բաց դաշտում հարձակվելու ռազմավարությունը, իսկ ամենավատ ռազմավարությունը ամրացված քաղաք պաշարելն է:

Պաշարված քաղաքի վրա կարելի է հարձակվել միայն այն դեպքում, երբ այլընտրանք չկա:

Առնվազն երեք ամիս կպահանջվի խոշոր վահաններ, պաշարման մարտասայլեր, պաշարման աշտարակներ ու մանգոնելներ ¹ կառուցելու և մյուս սարքավորումները պատրաստելու համար: Ամենաքիչը ևս երեք ամիս կպահանջվի դեպի քաղաքի պատերը տանող հողաշերտը բարձրացնելու համար:

Չորավարներն այնքան անհամբեր ու անխնա կդառնան, որ զինվորներին մրջյունների պես հարձակման կքշեն փայտե սանդուղքներով: Նման իրավիճակում զինվորների մեկ երրորդը միշտ զոհվում է կամ ծանր վիրավորվում, մինչդեռ քաղաքի դիմադրությունը մնում է անսասան: Սա է քաղաք պաշարելու կործանարար հետևանքը: Ուրեմն ավելի լավ է շրջանցել քաղաքը, քան պաշարել այն:

Ռազմարվեստում հմուտ զորավարը թշնամու զորքերին կստիպի հանձնվել առանց զենք կիրառելու, կգրավի թշնամու քաղաքներն առանց պաշարելու, կհաղթի իր թշնամուն առանց ճակատամարտի և կկործանի թշնամու պետությունը առանց երկարատև ռազմական գործողությունների:

Բանակը միասնական, իսկ զինվորներին անվնաս ու առողջ պահելով՝ հմուտ զորավարը կհաղթի պատերազմում՝ առանց բանակը վնասելու: Սա է ռազմական արվեստում գերագույն կատարելությունը, և սա է հարձակողական ռազմավարու-թյան ամենաառաջին ու հիմնական սկզբունքը:

¹ Մանգոնել — միջնադարյան պաշարման նետածիգ կամ քարածիգ մեքենա:

Պատերազմի օրենք է. եթե ուժերդ տաս անգամ են գերազանցում թշնամուն, կարող ես շրջապատել նրան, եթե հինգ անգամ են գերազանցում՝ կարող ես հարձակվել, եթե երկու անգամ են գերազանցում՝ կարող ես ճեղքել թշնամու բանակը երկու մասի:

Եթե բանակները հավասար են, պետք է փորձես հաղթել թշնամուն ճիշտ մարտավարությամբ և խաբեությամբ: Խուսափի՛ր թշնամուն առճակատվելուց, եթե նա թվով գերազանցում է քեզ: Եվ նահանջի՛ր, եթե ոչ մի տեսակետից առավելություն չունես:

Ուստի թեև փոքր բանակը կարող է համառ ու կատաղի կռիվ մղել, ի վերջո այն կգերեվարվի թվով գերազանցող թշնամու կողմից:

Ասում են, որ բանակի զորապետը երկրի անկախության հենաայունն է: Ուստի եթե հենաայունը ուժեղ է բոլոր առումներով, երկիրը կբարգավաճի ու կիզորանա: Եթե հենաայունը թերություններ ունի, երկիրը կթուլանա և ի վերջո կմնա անպաշտպան:

Երկրի իշխանը կամ միապետը երեք եղանակով կարող է միջամտել և փորձանք բերել իր բանակի գլխին:

Առաջինը. հրամայելով բանակին հարձակվել՝ անտեղյակ լինելով, որ բանակն ի վիճակի չէ հարձակվելու, կամ հրամայելով նահանջել՝ չգիտակցելով, որ բանակն անկարող է նահանջել: Ես դա կոչում եմ շփոթեցնել բանակը:

Երկրորդը՝ փորձելով բանակը կառավարել այնպես, ինչպես կառավարում է երկիրը՝ մոռանալով, որ բանակի ներքին կարգուկանոնը բոլորովին այլ օրենքներով է ղեկավարվում՝ համեմատած քաղաքացիական կառավարման հետ: Ես դա կոչում եմ խարխլել բանակի ոգին:

Երրորդը՝ փառասիրությամբ միջամտել ռազմական գործողությունների մեջ գտնվող բանակի գործերին՝ հաշվի չառնելով ըստ հանգամանքների գործելու ռազմավարության սկզբունքը: Սա նշանակում է կասկած ու անվստահություն մտցնել սպաների և զինվորների մեջ: Ես դա անվանում եմ կոտրել զինվորների հավատն ու վստահությունը:

Անվստահ ու խռովված ոգով բանակը մեծ վտանգ է ներկայացնում հենց սեփական երկրի համար, և հարևան երկրները առանց հապաղելու կձգտեն օգտվել ստեղծված իրավիճակից: Նման վիճակն անդամալույծ կանի բանակը և անխուսափելիորեն կհանգեցնի թշնամու հաղթանակին:

Ուստի կարող ենք ասել, որ յուրաքանչյուր հաղթանակ պայմանավորված է հինգ Էական տարրերով.

- կհաղթի նա, ով գիտի, երբ կռվել և երբ չկռվել
- կհաղթի նա, ով մարտը վարում է՝ հաշվի առնելով սեփական ուժերն ու թուլությունները

- կհաղթի նա, ում բանակը գինվորից մինչև զորապետ միասնական է
- կհաղթի նա, ով մարտից առաջ իրատեսական ծրագրեր է մշակում և համբերատար սպասում է առիթին՝ անպատրաստ թշնամուն անակնկալի բերելու համար,
- կհաղթի նա, ում զորավարները հմուտ են ռազմական արվեստում և ում բանակի ղեկավարումը զերծ է երկրի իշխանավորի միջամտությունից:

Սրանք են հաղթանակի հինգ կարևոր նախապայմանները:

Ուստի ասում են. եթե ճանաչում ես թշնամուդ և ճանաչում ես ինքդ քեզ, նույնիսկ հարյուր ճակատամարտում չես պարտվի: Եթե ճանաչում ես ինքդ քեզ, բայց չես ճանաչում թշնամուդ, տարածոյուրաքանչյուր հաղթանակի դիմաց մեկ պարտություն կկրես: Եթե չես ճանաչում ո՛չ ինքդ քեզ, ո՛չ թշնամուդ՝ կպարտվես բոլոր մարտերում: